ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/11-1

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությամբ «Այթի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1721 գրության հիման վրա, 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Այթի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1721 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները՝ համակարգի միջոցով (armep.am) ոչ ավտոմատ եղանակով ծանուցվեցին երեք աշխատանքնային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացվեց առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված համապատասխան եզրակացության համաձայն՝ «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում, պարտավորությունները գերազանցում են ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտը մերժել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Խաչատուր Երիցյանը:

3. **<u>«ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ն 21.06.2017թ. Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ընկերության 2016թ. ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ խնդրում եմ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդում ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգին կցել «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ի 2016թ. շահութահարկի հաշվարկը՝ ներբեռնված ՀՀ ՊԵԿ-ի «taxservice.am» կայքի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից»:

Ընկերությունը կից ներկայացրել է նաև 2016թ. շահութահարկի հաշվարկը:

Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության տնօրեն Վահագն Հարությունյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/11-1 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1721 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հրավերը (այսուհետ՝ Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.05.2017թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) կատարված հարցումը և Կոմիտեի կողմից 20.05.2017թ. տրված տեղեկանք-եզրակացությունը, Ընկերության 21.06.2017թ. գրությունը, Խորհրդի կողմից 04.07.2017թ. Կոմիտե կատարված հարցումը և Կոմիտեից 20.07.2017թ. ստացված պատասխանը.

ՀՀ պաշտպանության նախարարության հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացրած հայտը հանձնաժողովի կողմից 25.05.2017թ. թիվ 4 արձանագրությամբ մերժվել է՝ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3.3 հավելվածով՝ հրավերով սահմանված ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Խորհրդում 26.06.2017թ. կայացած նիստի ժամանակ «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ի տնօրենը հայտնեց, որ արդեն իսկ կատարվել են Ընկերության հաշվապահական որոշակի ճշգրտումներ, որի արդյունքում Ընկերության 2016թ. ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է պարտավորությունների հաշվեկշռային արժեքը:

Միաժամանակ, Ընկերությունը Խորհրդին խնդրեց հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ նշված հարցի վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով:

Խորհուրդը 04.07.2017թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով վերջինիս տալ եզրակացություն այն մասին, արդյոք Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել են ակտիվների հաշվեկշռային արժեքը, թե՝ ոչ:

Խորհրդի հարցմանն պատասխան՝ 20.07.2017թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ի կողմից 23.06.2017թ. ներկայացված 2016թ. շահութահարկի ճգրտված հաշվարկով ընկերության ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 13.615.068 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 13.562.846 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

• 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

• 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

• 70-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservise.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Հրավերի 7.6 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտենից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում Ընկերության պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովը, Ընկերության հայտը Կոմիտեի կողմից 20.05.2017թ. տրված տեղեկանք-եզրակացության հիման վրա մերժելով՝ գործել է իրավաչափ, սակայն Խորհուրդը հիմք ընդունելով Կարգի 70-րդ կետով սահմանված պահանջները և Կոմիտեի կողմից 20.07.2017թ. տրամադրված եզրակացությունը, գտնում է, որ խախտվել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և նույն հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2017թ. թիվ 03/26-1/10731-17 գրությամբ «ԱյԹի-Միկրոնեթվորքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ